

Թվերը գրելու հնամենի եղանակը

Թվերի գրառումը հայերենի այբուբենի տառերով.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
1	2	3	4	5	6	7	8	9
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
10	20	30	40	50	60	70	80	90
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
100	200	300	400	500	600	700	800	900
Թ	Ս	Վ	Տ	Ր	Յ	Բ	Փ	Զ
1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

Օգտվելով այս աղյուսակից լուծեք խաչքառը:

Խաչքառ

Հարցերը լուծեք բանավոր ու ներկայացրեք հայերենի այբուբենի տառերով:

Հորիզոնական

- Գտե՛ք 500 և 25 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:
- Գտե՛ք 40 թվի ամենամեծ բաժանարարի տասնապատիկը:
- Գտե՛ք 600 և 2400 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:
- Եթե Դավիթի մտապահած թվից հանեք 200, ստացած թիվը փոքրացնեք 2 անգամ կաստանաք 2400:
- Գտե՛ք 6 թվի ամենամեծ և ամենափոքր բաժանարարների գումարի տասնապատիկը:
- Բնական թվերից n ըն է n չ պարզ, n չ պաղաղրյալ:
- Գտե՛ք 3 և 1000 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:
- Ո՞ր թիվն է մտապահել Անահիտը, եթե նրա մտապահած թվի և 256-ի տարբերությունը 344 է:
- Գտի՛ր թիվը, որը 24-ի բաժանելիս ստացվում է 208 և 8 մնացորդ:

Ուղղաձիգ 1.

- Ո՞րն է ամենափոքր բնական թիվը:
- Պարկում կա 95 կանաչ, 20 դեղին և 104 կարմիր գնդակ: Առանց նայելու ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է հանել, որպեսզի դրանց մեջ լինեն տարբեր գույնի գնդակներ:
- Գտեք ամենափոքր քառանիշ թվի և ամենամեծ եռանիշ թվի տարբերությունը:
- **Ն**
- Ո՞ր թիվն է մտապահել Նարեկը, եթե նրա մտապահած թվի կրկնապատիկի և 30-ի քանորդը 40 է:
- Գտեք 25 և 2 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկի հարյուրապատիկը:

Ուղղաձիգ 2.

- Ո՞ր թիվն է մտապահել Սոնան, եթե նրա մտապահած թվի 40 և 25 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկի տասնապատիկն է:
- Գտեք 20-ի և 3-ի ամենափոքր ընդհանուր բազմապատիկի տասնապատիկը:
- Գտեք ամենափոքր քառանիշ թվի և 7-ի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:
- **Ը**
- Ո՞րն է ամենափոքր պարզ թիվը:

Ուղղաձիգ 3.

- Ո՞րն է 100 և 150 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:
- Ավտոմեքենայի արագությունը 80կմ/ժ է: Քանի՞ կիլոմետր կանցնի ավտոմեքենան 5 ժամում:
- **Ո**
- Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրան ձախից կցագրենք 7 թվանշանը:
- Ո՞րն է ամենափոքր եռանիշ թվի քառապատիկը:
- Գտեք 3 թվի ամենամեծ և ամենափոքր բաժանարարների գումարը:



